

տատուի նաեւ որ Հիթում Բ. Սեպտեմբերի (1295) սկիզբը ճամբայ ելած է այցելելու Պայտունի՝ Կիլիկիայէն: Նոյեմբերի սկիզբները ներկայացած Ղազանին և նոյն ամսուան մէջ Կիլիկիա իր արքունիքը վերադարձած իր հետեւորդներով:

Հոս յարակից ճշտում մըն ալ: Օրմանեան Ստեփանոս Օրբելեանէ առնելով կը յիշէ ոսկիէ փայլչայ մը Ղազան խանէ տրուած: Այս փալիչան այլուր գրուած է թալիչ մի ոսկի՝ որ կը տրուի վարդան վարդապետի 1264 թուին՝ երբ ան Հուլաղուի մօտ կը գտնուէր: Այս թալիչ կամ փալիչայն ըստ Օրբելեանի տախտակ է յափ թղթոյ միոյ և կիտոյ, գրեալ ի վերայ զառոսն Աստուծոյ և դակին: Չոյլ ոսկիէ այս նշանները, կ'ըսէ Օրմանեան, «Թաթարներուն համար ամէնէն մեծ պատիւն էր» (Ազգապատում էջ 1662):

Թալիչ կամ փալիչայ Հայերէն աղաւաղումն է թայզայ (Paizah կամ Paizah) որ իր կարգին աղաւաղումն է Չինարէն pai-tseuh: Կային թայիզաներ որոնք արծաթէ ձուլուած էին որոնց մեծութիւնը մօտաւորապէս 12×4 ինճեզ էր, իսկ ձոյլ ոսկիէն կ'ըլլար 6×2 ինճեզ: Ասոնց վրայ կ'ըլլար Աստուծոյ և ժամանակուան Թաթար գահակալին անունը: Թայզայ ըստացողը կը վայլէր մեծ հեղինակութիւն և

առանձնաշնորհումներ Թաթար երկրամասին մէջ: Թայզայ տրուած է Մարգօ Բօլոյի, վարդան վարդապետի, Ստեփաննոս Օրբելեանի, Մար Եահպէ Ալլահա Գ. Նեստորական Կաթողիկոսին, բոլորն ալ թփզարուն: Ընդհանրապէս միայն կը տրուէր Մոնկոլ արքունեաց ընտրանիին և արքունի տան անդամներուն:

Թայզաներուն հետ կը տրուէր նաեւ Եարլիկ կամ Եարլիխ (Yarligh կամ Yarlikh) տեսակ մը Թուրքիոյ Սուլթաններուն Պոռնոքոչտի, որ առաւել կամ նուազ անցազիր մըն էր, և հրաման՝ վճարմամբ ձի կամ ջորի ստանալու ի իջեւաններէն:

Աւելցնեմ որ ցարդ ոսկիէ թայզայ չէ գտնուած: Իսկ արծաթէ հատ մը գտնուեցաւ 1846ին և կը գտնուի Լենինկրատի Ակադեմիոյ Թանգարանին մէջ: Ունի երկաթ օղակ մը թայզան առկախ կրելու համար: Վրան Պասրա գրանշաններով և Մոնկոլ լեզուով գրուած է «Շնորհիւ յաւիտենական երկնից զօրութեան: Թող սուրբ ըլլայ Գոյիսանի (Արքայից Արքայի) անունը: Ան որ անոր յարգանք չի մատուցաներ պիտի սպանուի և պէտք է որ մեռնի»:

Թայզայի կոնակը կայ թիւ 42. ծանրութիւնը՝ շուրջ բառնոտ է:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՆԻԹԵՐ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԵՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՅԵՐԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԷՋ ԺԷ ԴԱՐՈՒՆ

Անմահ Հ. Ալիշանի ՀԱՅ-ՎԵՆԵՏԵՆ վերջ շատ բան մը չի մնար վենետիկի Հայ գաղութի անցեալին վրայ աւելցընելու, բայց սակայն ինչ որ ալ ըլլայ արժանի է որ գտնուածը ներկայացուի:

The Hartford Seminary Foundation, Case Memorial Libraryի (Hartford, Conn. U. S. A) Հայերէն

ձեռագրաց ցուցակը կազմած ատենս թիւ 95/200 ձեռագրին մէջ գտայ երկարաշունչ տաղ մը «Վասն Յակոբայ Նահապետին, և Վասն ծննդեան Յովասափայ և տեսանելոյ զերազն և պատմել հօրն և եղբարցն» որ շարադրուած է վենետիկ, ինչպէս որ տաղին վերջի հինգ տունները ցոյց կու տան, և զորս հոս կ'արտագրեմ: